ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայն. ք. Բյուրեղավան
Վազգեն Ա.Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02

12 մարտի 2021 թվական

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 6 (վեց) անդամներ:
Բացակա էին Վահրամ Ապրեսյանը, Ավետիք Ասոյանը, Արտյոմ Ավագյանը, Արման Խանզադյանը, Հայկ Վարդևանյանը:

<u>Ավագանու նիստին մասնակցում էին՝</u>

Բյուրեղավան համայնքի ղեկավարի խորհրդական Միշա Եղիազարյանը, համայնքի Նուռնուս և Ձրաբեր բնակավայրերի վարչական ղեկավարներ Մնացական Գևորգյանն ու Մուշեղ Հարությունյանը, համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Լիլիթ Ավուշյանը, ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Լիդիա Պողոսյանն ու բաժնի առաջատար մասնագետ Շուշիկ Ասատրյանը, գլխավոր մասնագետներ Սարգիս Ղազարյանն ու Դանիել Դանիելյանը, «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» ՓԲԸ-ի տնօրեն Միքայել Միքայելյանը:

<u>Նիստը վարում էր համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը:</u>

<u>Նիստն արձանագրում էր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Լիլիթ Ավուշյանը:</u>

Մինչև նիստի օրակարգին անցնելը համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը հայտարարեց, որ ավագանու տասնմեկ անդամներից նիստին ներկա են վեցը, քվորումն ապահովված է և առաջարկեց սկսել նիստը:

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի ԹԻՎ 2 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/Զեկ. ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝ ***ավագանին որոշում է.***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 12-ի թիվ 2 հերթական նիստի օրակարգը՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:

2.«Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի ֆինանսական գործունեության նախահաշիվը և դրա 2020 թվականի կատարողականը հաստատելու մասին:

3.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման տարեկան հաշվետվության մասին:

4.2020 թվականին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվության մասին:

5.Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով «Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում, հիմնանորոգում» ծրագիրը հաստատելու մասին:

6.Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով ««Անդրանիկ Պետրոսյանի անվան

Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության շենքի հիմնանորոգման աշխատանքներ» ծրագիրը հաստատելու մասին:

7.Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով «Ջրաբեր բնակավայրի խմելու ջրի ներքին բաշխիչ ցանցի կառուցում» ծրագիրը հաստատելու մասին:

8.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:

9.«Բյուրեղավան համայնքի մարզամշակութային կենտրոն» բյուջետային հիմնարկին անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով գույք ամրացնելու մասին:

10. «Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» արտադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով գույք ամրացնելու մասին:

11.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 117 բնակարանը Շողակաթ Վանիկի Հարոյանին անհատույց օտարելու մասին:

12.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքն ուղղակի վաճառքի ձևով օտարելու մասին:

13.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքն ուղղակի վաճառքի ձևով օտարելու մասին:

14.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերում ինքնակամ կառուցված և համայնքային սեփականության իրավունքը ճանաչված անշարժ գույքի տնօրինման մասին:

15.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 02-ի N 06-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

16.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 02-ի N 07-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

17.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2020 թվականի հոկտեմբերի 12-ի N 45-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

18.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը պետական սեփականության փոխանցելու մասին:

19.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմում Բյուրեղավան համայնքի ներկայացուցիչներ առաջադրելու մասին:

20.Մեկ տարվա ընթացքում ավագանու նիստերի ավելի քան կեսից համայնքի ավագանու անդամ Հայկազ Բաղդասարյանի բացակայելն անհարգելի համարելու մասին:

21.Մեկ տարվա ընթացքում ավագանու նիստերի ավելի քան կեսից համայնքի ավագանու անդամ Վարդան Սուքիասյանի բացակայելն անհարգելի համարելու մասին:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ- 6 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 05-Ա/

Օրակարգը հաստատելուց հետո ներկայացվեցին որոշումների նախագծերը:

<u>Լսեցին</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԴԻԱ ՊՈՂՈՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 83-րդ հոդվածի 2-րդ մասի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35–րդ հոդվածի՝ ***ավագանին որոշում է.***

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-6 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 06-Ա/

Լսեցին

«ԱՆԴՐԱՆԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ԵՎ ԴՐԱ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԻՔԱՅԵԼ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 83-րդ հոդվածի 1-ին մասի և 84-րդ հոդվածի 1-ին մասի «իգ» կետի՝ ***ավագանին որոշում է.***

1.Հաստատել «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի ֆինանսական գործունեության նախահաշիվը և դրա 2020 թվականի կատարողականը՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների:

2.Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման օրվանից:

Կողմ-6 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 07-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՐԳԻՍ ՂԱԶԱՐՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի՝ ***ավագանին որոշում է.***

1.Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-6 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 08-Ա/

Լսեցին

2020 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՐԳԻՍ ՂԱԶԱՐՅԱՆ /

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 82-րդ հոդվածի 7-րդ մասի՝ ***ավագանին որոշում է.***

1.Ընդունել ի գիտություն 2020 թվականին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-6 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 09-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ, ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՐԳԻՍ ՂԱԶԱՐՅԱՆ /

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի և պայմանավորված համայնքում հիմնանորոգված ներհամայնքային ճանապարհներ, կառուցված մայթեր ունենալու անհրաժեշտությամբ՝ ***ավագանին որոշում է.***

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով «Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում, հիմնանորոգում» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-6 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 10-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ««ԱՆԴՐԱՆԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ» ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՐԳԻՍ ՂԱԶԱՐՅԱՆ /

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի և պայմանավորված բնակչությանը մատուցվող առողջապահական ծառայությունների որակը բարձրացնելու անհրաժեշտությամբ՝ *ավագանին որոշում է.*

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով ««Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության շենքի հիմնանորոգման աշխատանքներ» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-6 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 11-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ՋՐԱԲԵՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՆԵՐՔԻՆ ԲԱՇԽԻՉ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՐԳԻՍ ՂԱԶԱՐՅԱՆ /

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի և պայմանավորված Ջրաբեր բնակավայրում ջրամատակարարման ծառայությունների որակը բարձրացնելու անհրաժեշտությամբ՝ *ավագանին որոշում է.*

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով «Ջրաբեր բնակավայրի խմելու ջրի ներքին բաշխիչ ցանցի կառուցում» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-6 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 12-Ա/

<u>Լսեցին</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՇՈՒՇԻԿ ԱՍԱՏՐՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2016 թվականի հունվարի 8-ի N 2-Ն հրամանով հաստատված կարգի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան, Նուռնուս և Ձրաբեր բնակավայրերի գույքագրման փաստաթղթերը՝ ***ավագանին որոշում է.***

1.Հաստատել գույքագրման հանձնաժողովի ներկայացրած Բյուրեղավան համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝

1)Համայնքի վարչական տարածքի հողերի սեփականատերերի մասին տեղեկանքը (2021 թվականի փետրվարի 02-ի դրությամբ)՝ համաձայն հավելված N 1-ի.

2)Պաշարների (ներառյալ փոքրարժեք կամ արագամաշ առարկաների) գույքագրման ցուցակը՝ համաձայն հավելված N 2-ի.

3)Հիմնական միջոցների գույքագրման ցուցակները՝ համաձայն հավելված N 3-ի.

4)Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի և ստացման ենթակա այլ գումարների գույքագրման ցուցակը՝ համաձայն հավելված N 4-ի.

5)Մատակարարումների գծով կրեդիտորական պարտքերի և վճարման ենթակա այլ գումարների գույքագրման ցուցակը՝ համաձայն հավելված N 5-ի.

6)Բյուջեի հետ հաշվարկների գույքագրման ցուցակը՝ համաձայն հավելված N 6-ի.

7)Կանխիկ դրամական միջոցների գույքագրման ցուցակը՝ համաձայն հավելված N 7-ի.

8) Անկանխիկ դրամական միջոցների գույքագրման ցուցակը՝ համաձայն հավելված N 8-ի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-6 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 13-Ա/

Լսեցին

«ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԵՎ ԱՆԺԱՄԿԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՇՈՒՇԻԿ ԱՍԱՏՐՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ *ավագանին որոշում է.*

1.«Բյուրեղավան համայնքի մարզամշակութային կենտրոն» բյուջետային հիմնարկին անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով ամրացնել համայնքային սեփականություն հանդիսացող գույք՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված գույքի պահպանման և սպասարկման ծառայությունների իրականացումը հանձնարարել «Բյուրեղավան համայնքի մարզամշակութային կենտրոն» բյուջետային հիմնարկին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-6 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 14-Ա/

Լսեցին

«ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐԻ ԱՆՎԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԵՎ ԱՆԺԱՄԿԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՇՈՒՇԻԿ ԱՍԱՏՐՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ *ավագանին որոշում է.*

1.«Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» արտադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը

անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով ամրացնել համայնքային սեփականություն հանդիսացող գույք՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված գույքի պահպանման և սպասարկման ծառայությունների իրականացումը հանձնարարել «Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» արտադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-6 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 15-Ա/

<u>Լսեցին</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՕՂԱԿԱՁԵՎ ՓՈՂՈՑ 50 ՇԵՆՔԻ 117 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՇՈՂԱԿԱԹ ՎԱՆԻԿԻ ՀԱՐՈՅԱՆԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԻՇԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, հիմք ընդունելով համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Շողակաթ Վանիկի Հարոյանի դիմումը՝ ***ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 17.38 քմ ընդհանուր մակերեսով 117 բնակարանը (նախկին 4-րդ հանրակացարան 147 սենյակ) անհատույց օտարել (նվիրել) Շողակաթ Վանիկի Հարոյանին՝ ծնված 1981 թվականի հունվարի 09-ին:

2.Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Շողակաթ Վանիկի Հարոյանի կողմից:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-6 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 16-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՆԻԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14^3-րդ և 30-րդ հոդվածների, Հողային օրենսգրքի 57-րդ և 66-րդ հոդվածների, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի № 286 որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի, 2006 թվականի մայիսի 18-ի № 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33.1-րդ, 34-րդ և 34.2-րդ կետերի, 35-րդ կետի «ա» և «ե» ենթակետերի ու հիմք ընդունելով N 09032021-07-0017 սեփականության վկայականը, Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Երիտասարդական փողոց 23 շենք 39 բնակարանի բնակիչ Արազ Անդրանիկի Վերդյանի 2021 թվականի հունվարի 26-ի դիմումն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Օղակաձև փողոց 23/75 հասցեում գտնվող բնակելի նպատակային նշանակության 190.8 քմ ներքին (219.91 քմ արտաքին) մակերեսով բնակելի տունն ու 2.12 քմ մակերեսով պարիսպները 1398789 (մեկ միլիոն երեք հարյուր ինսունութ հազար յոթ հարյուր ութսունինը) դրամով և դրանց զբաղեցրած 0.014546 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության (ծածկագիր՝ 07-003-0028-0010) հողամասը 427652,4 (չորս հարյուր քսանյոթ հազար վեց հարյուր հիսուներկու ամբողջ չորս տասնորդական) դրամով ուղղակի վաճառքի ձևով օտարել կառույցն իրականացրած Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Երիտասարդական փողոց 23 շենք 39 բնակարանի բնակիչ Արազ Անդրանիկի Վերդյանին:

2.Նշված գույքը դուրս գրել Բյուրեղավան համայնքի հաշվեկշռից:

3.Սահմանել, որ նշված գույքի առուվաճառքի պայմանագրի վավերացման և գրանցման հետ կապված վճարները կատարվում է Արազ Անդրանիկի Վերդյանի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-6 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 17-Ա/

<u>Լսեցին</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՆԻԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14^3-րդ և 30-րդ հոդվածների, Հողային օրենսգրքի 57-րդ և 66-րդ հոդվածների, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի № 286 որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի, 2006 թվականի մայիսի 18-ի № 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33.1-րդ, 34-րդ և 34.2-րդ կետերի, 35-րդ կետի «բ» և «ե» ենթակետերի ու հիմք ընդունելով N09032021-07-0012 սեփականության վկայականը, Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Երիտասարդական փողոց 8 շենք 6 բնակարանի բնակիչ Նարեկ Վոլոդյայի Մխոյանի 2021 թվականի հունվարի 26-ի դիմումն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց 8/63 հասցեում գտնվող հասարակական նպատակային նշանակության 113.2 քմ ներքին (146.7 քմ արտաքին) մակերեսով սպասարկման օբյեկտը 2772630 (երկու միլիոն յոթ հարյուր յոթանասուներկու հազար վեց հարյուր երեսուն) դրամով և դրա զբաղեցրած 0.007779 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության (ծածկագիր՝ 07-003-0028-0011) հողամասը 228702,6 (երկու հարյուր քսանութ հազար յոթ հարյուր երկու ամբողջ վեց տասնորդական) դրամով ուղղակի վաճառքի ձևով օտարել կառույցն իրականացրած Բյուրեղավան համայնքի

Բյուրեղավան քաղաքի Երիտասարդական փողոց 8 շենք 6 բնակարանի բնակիչ Նարեկ Վոլոդյայի Մխոյանին:

2.Նշված գույքը դուրս գրել Բյուրեղավան համայնքի հաշվեկշռից:

3.Սահմանել, որ նշված գույքի առուվաճառքի պայմանագրի վավերացման և գրանցման հետ կապված վճարները կատարվում է Նարեկ Վոլոդյայի Մխոյանի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-6 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 18-Ա/

<u>Լսեցին</u>
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՆԻԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի՝ ***ավագանին որոշում է.***

1.Թույլատրել Բյուրեղավան համայնքի ղեկավարին՝ սեփական նախաձեռնությամբ ընդունել որոշում՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում ինքնակամ կառուցված և համայնքային սեփականության իրավունքը ճանաչված անշարժ գույքը (հողամասը և շինությունները) օտարելու վերաբերյալ՝ նախապատվություն տալով կառույցն իրականացրած անձին:

2.Շինությունների նկատմամբ մինչև օտարումը համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար անհրաժեշտ վճարներն իրականացվում են շինությունները գնողի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-6 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 19-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 02-Ի N 06-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԼԻԹ ԱՎՈՒՇՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի՝ ***ավագանին որոշում է.***

1.Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 02-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություն կիրառելու կարգը հաստատելու մասին» N 06-Ն որոշման նախաբանում «հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 27-ի N 20-Ն որոշմամբ հաստատված հավելված N1-ի 5-րդ կետը և հավելված N2-ի 4-րդ կետը,» բառերը հանել:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-6 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 20-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 02-Ի N 07-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԼԻԹ ԱՎՈՒՇՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 23-ի N 08-Ն որոշմամբ ընդունված կարգը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***ավագանին որոշում է.***

1.Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 02-ի «Հայաստանի Հանապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների կազմերը հաստատելու մասին» N 07–Ա որոշման 2-րդ կետում «Բյուրեղավանի համայնքային «Բարեկարգում և կանաչապատում»

համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն» բառերը փոխարինել «Բյուրեղավան համայնքի ղեկավարի տեղակալ» բառերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-6 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 21-Ա/

<u>Լսեցին</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 45-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԼԻԹ ԱՎՈՒՇՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի՝ ***ավագանին որոշում է.***

1.Բյուրեղավան համայնքի ավագանու 2020 թվականի հոկտեմբերի 12-ի «Բյուրեղավանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու մրցութային հանձնաժողովի կազմում ընդգրկվող ավագանու անդամի և աշխատակազմի աշխատակցի անհատական կազմերը հաստատելու մասին» N 45-Ա որոշման 1-ին կետում «համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Լիդիա Պողոսյանին» բառերը փոխարինել «Բյուրեղավան համայնքի ղեկավարի տեղակալ Հայկ Եղյանին» բառերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-6 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 22-Ա/

<u>Լսեցին</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԼԻԹ ԱՎՈՒՇՅԱՆ/

Համաձայն «Արխիվային գործի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ *ավագանին որոշում է.*

1.Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող 2011-2017 թվականների արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը փոխանցել պետական սեփականության:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-6 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 23-Ա/

<u>Լսեցին</u>
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԼԻԹ ԱՎՈՒՇՅԱՆ/

Համաձայն Հայաստանի Հանրապետության վարչապետի 2014 թվականի փետրվարի 10-ի N 85–Ա որոշման 1-ին կետով հաստատված օրինակելի կանոնադրության և հիմք ընդունելով Կոտայքի մարզպետի 2021 թվականի մարտի 05-ի N 01 /15/01537-2021 գրությունը՝ *ավագանին որոշում է.*

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմում ընդգրկվելու համար Բյուրեղավան համայնքից առաջադրել ներկայացուցիչներ՝
1)խորհրդի պետական հատվածը ներկայացնող՝ Բյուրեղավան համայնքի ղեկավարի տեղակալ Հայկ Եղյանին,
2)խորհրդի ոչ պետական հատվածը ներկայացնող՝ Միքայել Խաչատրյանին՝ ծնված 1998 թվականի նոյեմբերի 11-ին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-6 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 24-Ա/

Լսեցին

ՄԵԿ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԻ ԱՎԵԼԻ ՔԱՆ ԿԵՍԻՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ՀԱՅԿԱԶ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ԲԱՑԱԿԱՅԵԼՆ ԱՆՀԱՐԳԵԼԻ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԼԻԹ ԱՎՈՒՇՅԱՆ/

Համաձայն Բյուրեղավան համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 23-ի N 02-Ա որոշմամբ ընդունված Բյուրեղավան համայնքի ավագանու կանոնակարգի 4-րդ բաժնի 19-րդ կետի՝ *ավագանին որոշում է.*

1.Մեկ տարվա ընթացքում ավագանու նիստերի ավելի քան կեսից Բյուրեղավան համայնքի ավագանու անդամ Հայկազ Բաղդասարյանի բացակայելն համարել անհարգելի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-0 Դեմ- 6 Ձեռնպահ-0

Որոշումը չընդունվեց:

Լսեցին

ՄԵԿ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԻ ԱՎԵԼԻ ՔԱՆ ԿԵՍԻՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ՎԱՐԴԱՆ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻ ԲԱՑԱԿԱՅԵԼՆ ԱՆՀԱՐԳԵԼԻ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԼԻԹ ԱՎՈՒՇՅԱՆ/

Համաձայն Բյուրեղավան համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 23-ի N 02-Ա որոշմամբ ընդունված Բյուրեղավան համայնքի ավագանու կանոնակարգի 4-րդ բաժնի 19-րդ կետի՝ *ավագանին որոշում է.*

1.Մեկ տարվա ընթացքում ավագանու նիստերի ավելի քան կեսից Բյուրեղավան համայնքի ավագանու անդամ Վարդան Սուքիասյանի բացակայելն համարել անհարգելի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-0 Դեմ- 6 Ձեռնպահ-0

Որոշումը չընդունվեց:

Օրակարգի հարցերը սպառվեցին:

Ավագանու նիստն ավարտվեց:

Ավագանու անդամներ՝

1.ԱՂԱՋԱՆՅԱՆ ԳԵՈՐԳԻ _____

2.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՅԿԱՋ _____

3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍԼԱՎԻԿ _____

4.ՇԱՌՅԱՆ ԱՐԳԱՄ _____

5.ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ _____

6. ՕՀԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ **Հ. ԲԱԼԱՍՅԱՆ**

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ _____ **Լ. ԱՎՈՒՇՅԱՆ**